ԲՈՒՐՍԱ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

ԱՆԻ ԱՒԵՏԻՍԵԱՆ
aniavet84@mail.ru

ՄԻՒՏՔ

ԺԹ. դարի սկզբից՝ Եւրոպայում եւ Բ. կէսից՝ Օսմանեան Կայսրութիւնում կազմակերպուել են տօնավաճառներ, ցուցահանդէսներ: ԺԹ. դարը համարուել է «Ցուցահանդէսների Դարաշրջան»:

Առաջին արդիւնաբերական, առեւտրային ցուցահանդէս-տօնավաճառների կազմակերպիչները եղել են եւրոպական առեւտրային կենտրոնները՝ Ֆրանսիան, Մեծն Բրիտանիան, Ա.Մ.Ն.ն, Աւստրալիան[1]:

1798ի միջազգային առաջին «Արդիւնաբերական Ցուցահանդէս»ը բացուել է Ֆրանսիայում, իսկ մինչեւ 1849 կազմակերպուել է եւս 12 նման ցուցահանդէս[2]:

1851 Մայիսի 1ին Լոնդոնի *Հայդ Փարկի* «Քրիսթըլ Փելըս»ում բացուել է «Միջազգային Գիւղատնտեսական եւ Արդիւնաբերական Ապրանքների Ցուցահանդէս»՝ մասնակից պետութիւնների «Համաշխարհային» ընդգրկումով:

Կազմակերպող երկրների համար այս ցուցահանդէսները եղել են տնտեսական եւ արհեստագիտական կարողութիւնների ցուցադրման եւ ապրանքաարդիւնաբերութեան նոր մշակոյթի փոխիւրացման վայր:

Որպէս կանոն ցուցահանդէսները կազմակերպուել են երկրների պատմական կարեւոր իրադարձութիւնների տարելիցները յիշարժանօրէն նշելու համար: 1876ի Ֆիլադելֆիայում կազմակերպուածը բացուել է Ամերիկայի անկախութեան 100րդ, 1889ի Փարիզինը՝ Ֆրանսիայի անկախութեան 100րդ[3]:

1838 Օգոստոսին Օսմանեան Կայսրութեան եւ Մ. Բրիտանիայի միջեւ կնքուել է առեւտրային պայմանագիր: Այն նախատեսել է Օսմանեան Կայսրութեան ողջ տարածքում՝ տարածքային ջրերով ու սեւծովեան նեղուցներով ազատ առեւտրի, ապրանքների անմաքս փոխադրութեան, նոյնիսկ երկրից գիւղատնտեսական արտադրանքի եւ հանածոների արտահանման իրաւունքը[4]: Օսմանեան Կայսրութիւնն էլ այս համաձայնագրով ստացել է երկրի տնտեսութիւնը արտաքին աշխարհ հանելու, արեւմտեան շուկայում տեղ զբաղեցնելու հնարաւորութիւն[5]:

Այս նպատակի իրականացման ամենակարճ ճանապարհներից մէկն է եղել Եւրոպայում կազմակերպուող ցուցահանդէսներին մասնակցելը:

Եւ ահա, 1851ին Օսմանեան Կայսրութիւնը մասնակցել է Լոնդոնի ցուցահանդէսին՝ ներկայանալով բերք ու բարիքով, արհեստի եւ արուեստի նՄիշներով:

Եւրոպական ցուցահանդէսների օրինակով՝ 1863ին Կ. Պոլսի Սուլթան Ահմէդ Հրապարակում սուլթան Աբդուլազիզի (1861-1867) հանդիսապետութեամբ բացուել է միջազգային արդիւնաբերական ցուցահանդէս, որը նպատակ է ունեցել ցուցադրելու «*Օսմանեան տնտեսութեան առաջադիմութիւնը, երկրում արտադրուող ապրանքների որակը, տեսակը եւ արժէքները»,* ինչպէս նաեւ *«արդիւնաբերողների խնդիրները լուծելու եւ ձեռքբերումները գնահատելու համար»*[6]:

Ցուցահանդէսը լայն արձագանգ է ստացել Եւրոպայում: Այն տեւել է շուրջ հինգ ամիս, ունեցել 150,000 այցելու: Ցուցահանդէսի պատուին հիմն է գրել իտալացի յօրինող Կալիստո Գուատելին[7]: Ցուցադրուել են մասնաւորապէս գիւղմթերք, անտառային բարիքներ, կենցաղային, արդիւնաբերական, ոսկէ, մետաքսեայ, բրդեայ, կաշուէ իրեր, հանքանիւթեր, գործուածքներ, ճարտարապետական եւ գեղեցիկ արուեստի գործեր, երկրի տարբեր կողմերից բերուած ցորենի 42 տեսակ-նմիւշներ, գիւղատնտեսական մեքենաներ, գործիքներ, Բուրսայից՝ բոժոժներ, մետաքս, հագուստ, զանազան գործուածքներ, բերք, կերպասեղէն եւն.[8]:

Պոլսում երկրորդ ցուցահանդէսը նախաձեռնուել է 1894ին[9]:

Միայն Բուրսա Նահանգի[10] կենտրոն (թրք.՝ *Bursa Vilayet Merkezi*)՝ Բուրսայում, Ի. դարի առաջին քառորդին կազմակերպուել է երեք արդիւնաբերական, գիւղատնտեսական ցուցահանդէս՝ 1906ին[11], 1909ին[12], 1923ին: Վերջինս՝ Թուրքիայի Հանրապետութեան հիմնադիր Միւստաֆա Քեմալ Աթաթուրքի հովանաւորութեամբ[13]:

Հաղորդումս անդրադարձ է յատկապէս Բուրսայում 1906ին եւ 1909ին կազմակերպուած ցուցահանդէսներին եւ հայերի մասնակցութեանը[14]:

Երկու ցուցահանդէսների կազմակերպչական հարցերը կարգաւորելու համար ստեղծուել են յանձնաժողովներ, գրուել կանոնադրութիւններ, պատրաստուել ոսկեայ եւ արծաթեայ շքանշաններ՝ հիւրերին, մասնակիցներին պատուելու համար:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1906 Օգոստոսի 19ին՝ սուլթանի գահակալութեան տարեդարձին[15], Բուրսայում հանդիսութեամբ բացուել է ցուցահանդէսը՝ նահանգապետի, պաշտօնեաների, օտարերկրեայ դիւանագէտների, Ֆրանսիայի, Պարսկաստանի, Յունաստանի, Իսպանիայի հիւպատոսների եւ երկրի հոգեւոր՝ իսլամ, քրիստոնեայ (յունաց եւ հայոց առաջնորդութիւնների) բարձրաստիճան ներկայացուցիչների, տեղի եւ Կ. Պոլսի, օտարալեզու թերթերի թղթակիցների ներկայութեամբ[16]:

Հիւրերի պատուին ցուցահանդէսի տնօրէնը, նահանգապետը ընդունելութիւն են կազմակերպել[17]: Հնչել են երգեր, մեծարանքի խօսքեր, աղօթքներ, մաղթանքներ սուլթան Աբդուլ Համիդ Բ.ին (1876-1909)

ուղղուած, որ այդ գործը իրականացուել է նրա անմիջական հովանաւորութեամբ, գովաբանել են Բուրսայի քաղաքապետ Ռեշիդ փաշայի եւ նահանգապետ Թեւֆիք բէյի սոյն նախաձեռնութիւնը[18]:

Պատասխան խօսքում Թեւֆիք բէյը յատկապէս կարեւորել է, որ Ցուցահանդէսը ոչ միայն ցուցադրելու է արդիւնաբերական ապրանքներ, բարիքներ, այլ յատկապէս քաջալերելու է բարոյապէս եւ նիւթապէս արհեստաւորներին, երբ կը տեսնեն իրենց արտադրութեան գնումն ու գնահատումը[19]:

Ցուցահանդէսի համար ընտրուել է տեղի *Համիդիյէ Արհեստագործական Վարժարանի* երկյարկանի շէնքը (حميديه بروسه صنايع مكتبى): Ցուցահանդէսը կրել է «Բուրսայի Արտադրութիւնն Ու Բերքը» (بروسه محصولات و معمولات سركس) անուանումը[20]: Մասնակցել են տեղական արհեստների հՄիւտ վարպետներ՝ Բուրսայից, Պոլսից, Անկարայից, Սպարթայից, Գոնիայից, Սալոնիկից, Էդիրնէից, Կեսարիայից, Մանիսայից, Քըրշեհիրից[21]:

Ցուցադրուել են 20 տեսակի ապրանքներ, դասակարգուած՝ վարժարանի 21 սենեակներում եւ մեծ սրահում[22]:

Ցուցահանդէսի ապրանքների քանակային հաշուեկշիռը կազմել է 1,659,813 կգ, 1,222,55 մետր եւ 21,728 կտոր, իսկ գումարայինը՝ 953,839 ղուրուշ[23]:

Ըստ Գ. Քորքմազի, նահանգապատկան ցուցադրուող ապրանքների քանակը եղել է 18,434 կտոր, 710,60 մետր եւ 1,659,813 կգ, որոնց ընդհանուր արժէքը կազմել է 712,908 ղուրուշ, իսկ ցուցահանդէսին ուղարկուած ապրանքների քանակը՝ 3,294 կտոր, 511,95 մետր եւ ամբողջական արժէքը՝ 240,931 ղուրուշ[24]:

Ցուցահանդէսը այցելուների առջեւ բաց է եղել կ. ետք ժամը 1ից 5 եւ 7ից 11, պարտէզը՝ մինչեւ կէսգիշեր ժամը 3ը, իսկ Երեքշաբթի օրերը տրամադրուած է եղել իսլամ կանանց[25]:

Ցուցահանդէսը քաղաքին հաղորդել է համատարած ցնծութիւն, կազմակերպուել են խրախճանքներ, ձիարշաւներ, հեծանուավազք, ըմբշամարտեր, հրավառութիւն[26]: Ցուցահանդէսի այցելուների թիւը հասել է 27,837ի (օսմանցի՝ 27,639, գերմանացի՝ 56, ֆրանսիացի՝ 67, անգլիացի՝ 22, աւստրալիացի՝ 25, շուէյցարացի՝ 2, իսպանացի՝ 2, պարսիկ՝ 9, ռուս՝ 2, հոլանդացի՝ 6, հնդիկ՝ 3)[27]:

Քաղաքի փողոցները, կառավարական «ապարանքները»՝ քաղաքապետարանը, վարչական շէնքերը, Օսմանեան Բանկը, հայոց եւ յունաց առաջնորդարանները, «Սինգէր» կարի մեքենաների գործարանի մասնաճիւղը, նաեւ ցուցահանդէսին կից ընդարձակ պարտէզը զարդարուած են եղել «*Փադիշահըմ Չոք Եաշա*» (Փադիշահին երկար կեանք) վերտառութեամբ դրօշակներով, գունաւոր լուսավառներով[28]:

Պարտէզում քաղաքային նուագախումբը հնչեցրել է երաժշտական գործեր, եւ որպէս լրացուցիչ ցուցահանդէսային տարածք ցուցադրուել են

«կանոնաւոր շարուածքով» օսմանցի վարպետների պատրաստած ձիակառքերի նՄիշներ զարդարուն ձիերով՝ «Չիֆթէլէր» կայսերական ագարակից ուղարկուած: Առանձին տաղաւարներում ցուցադրուել են ընտանի կենդանիների ընտրագոյն տեսակներ՝ գեղեցկատես աքաղաղներ, թռչուններ, նապաստակներ, սագեր, բադեր եւն.[29]: Պարտէզի մի անկիւնը յատկացուել է ֆիլմերի ցուցադրութեանը, ուր Պ. Ֆրոնմայէն որոշ տեսարաններ է ներկայացրել[30]:

Միայն ցուցահանդէսի տաղաւարների համար տրամադրուել է 1,500 ոսկի[31]: Ընդհանրապէս ցուցահանդէսի կազմակերպական ծախսը կազմել է շուրջ 287,576 ղուրուշ[32]:

Ցուցահանդէսն իր կանոնաւորութեամբ հիացրել է այցելուներին, որոնք նկատել են, որ Եւրոպայի որեւէ քաղաքի մէջ տեղական արդիւնաբերութեան համար կազմակերպուած ցուցահանդէսը սրանից կատարեալ չէր կարող լինել[33]: Նկատուել է նաեւ, որ Կոնիայի եւ Էդիրնէի ցուցահանդէսներից յետոյ՝ Բուրսայի ցուցահանդէսը եւս օսմանեան արդիւնաբերութեան զարգացմանը խթանող յաջողուած քայլ է[34]:

Ցուցահանդէսը տեւել է 41 օր: Պաշտօնապէս փակուել է Սեպտեմբերի 30ին՝ շաբաթ երեկոյեան, սակայն մինչեւ Հոկտեմբեր 13ը[35] գործել է որպէս վաճառատուն[36]:

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԻ ՑՈՒՑԱՆՄԻՇՆԵՐ

Տօնավաճառ-ցուցահանդէսի 21 սենեակ-սրահների ցուցանՄիշները[37]

Սենեակ	Ցուցադրուած նՄիշներ
1	«Թուրք Օրիորդաց Վարժարան»ի սանուհիների, նաեւ առանձին անձերի կողմից պատրաստուած ձեռագործներ, ոմանք *«Փադիշահըմ չոք եաշա»* վերտառութեամբ:
2	Սպարթայի, Ուշաքի, Քուդուսի, Սեմաւի, Էսքիշեհիրի, Քէօթահիայի, Քըրշեհիրի բրդեայ գորգեր եւ օթոցներ, նաեւ Կեսարիայի հռչակաւոր մետաքսեայ գորգեր: Հերեքէի Կայսերական Գործարանի[38] արտադրութեան երկու մեծկակ գորգեր, 250 ոսկի[39] արժողութեամբ:
3	Հնաոճ առարկաներ եւ ձեռքի աշխատանքներ՝ թրեր, զէնքեր, տաբատներ՝ բոլորն էլ տեղական արտադրութեան:
4	Մետաքսեայ գործուածքներ, այդ թւում Հերեքէի եւ ՔարաՄիւսալի գործարանների մետաքսեայ կերպասներ:
5	Բուրսայի յայտնի սրբիչներ (*հաւլու*), բաղնիքի պիտոյքներ, սեղանի պարագաներ, տեղական՝ խիտ հիւսուածքով բրդեայ *աբանի*ներ[40], Բալըքեսիրի, Բիլեջիկի, Սէօյիւտի, Էսքիշեհիրի, Չեշմէի, Մանիսայի գործուածքներ, բրդեայ կերպասեղէն[41]:
6	Մետաքսագործութիւն: Բոժոժի արտադրութիւն, թէ սերմը ինչ

	շրջաններ է անցել մինչեւ բոժոժի վիճակին հասնելը:
7	«Սինգէր» Ընկերութեան մեքենաներ. բաժնի միքանի գործավարուհիներ այցելուներին ծանօթացրել են բանուածքների պատրաստութեան ձեւի եւ մեքենաների գործածութեան եղանակի հետ[42]:
8	Ռեժիի[43] վարչութեան՝ նահանգում եւ այլուր արտադրուող ծխախոտի տերեւներ եւ ծխախոտների տեսակների[44]:
9	Ակնակուռ եւ ասեղնագործ իրեր, զանազան արհեստներ:
10-11	Բուրսայի Համիդիյէ Արհեստագործական Վարժարանի եւ Պոլսի Արհեստագործական Վարժարանի սաների արտադրութիւն՝ գրելու, արդուզարդի սպասներ, գրապահարաններ, կահկարասիներ[45]:
12	Բնութեան բարիքներ, յատկապէս Բուրսայի, Քարահիսարի անտառների եւ հանքարդիւնաբերութեան՝ ծառերի նՄիւշներ, սերմեր, շշերով հանքային ջրեր[46]:
13	Թամբագործութեան, մորթու մշակման, կօշկագործութեան գործիքներ, մորթիներ, կօշիկներ:
14	ՆերՄիւծուած երկրագործական առարկաներ:
15	Շաքարագործութիւն ու հրուշակագործութիւն: Նահանգի պտուղներից պատրաստուած օշարակներ եւ անուշեղէն:
16-17	Կերպասեղէնի մեքենաներ, երկրագործական գործիքներ եւ անօթներ:
18	Տեղական եւ Այւալըքի, Էդրեմիդի եւ Միւդանիայի գաւառներից՝ կարագ, ձիթաիւղ, պահածոներ, վարդաջրեր:
19	Գեղարուեստ:
20-21	Քէօթահիայի վարպետների ստեղծած յախճապակիների նՄիւշներ[47]:

Բոլոր սրահներում ցուցավար պաշտօնեաները ընդունել են այցելուներին եւ ներկայացուած ապրանքների մասին նրանց ծանուցել[48]:

Գնումներն իրականացուել են շէնքի երկու յարկերում: Պաշտօնեան յատուկ կտրօնի վրայ նշել է գնորդի անունն ու ապրանքագինը, ապա այն ներկայացուել է գանձապետին: Գումարի գանձումից յետոյ՝ թուղթը կնքուել է արդէն մէկ ուրիշ պաշտօնեայի կողմից: Սա խօսում է, հաշուական գործերի կանոնաւոր հսկողութեան մասին[49]:

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Ցուցահանդէս-տօնավաճառը կրել է բազմազգ բնոյթ (թուրք, հայ, յոյն, ֆրանսիացի, ռուս, բուլղար եւն.): Մասնակցել են 522 հոգի[50], նրանցից 102ը եղել են հայ, որից 94ը միայն Բուրսա Նահանգից. (Բուրսայից՝ 39, Բիլեջիկից՝ 29, Բալըքեսիրից՝ 1, Ազիզիէյից՝ 2, Սոքուդից (Սողուտից)՝ 1, Մէյխալիչից՝ 3, Քէօթահիայից՝ 5, Փազար Քէօյից՝ 2, Բանդրմայից՝ 3,

Էսքիշեհիրից՝ 5, Քարահիսարից՝ 4), եւ 8ը այլ նահանգներից (Պոլսից՝ 3, Անկարայից՝ 1, Սպարթայից՝ 2, Կեսարիայից՝ 1, Քըրշեհիրից՝ 1)՝ վաճառականներ, ոսկերիչներ, դարբիններ, հրուշակագործներ, կօշկակարներ, դեղագործներ, դերձակներ, ատաղձագործներ, կահագործներ, երկաթագործներ, կաշեգործներ, խարազագործներ, հնավաճառներ[51]:

Հայերի ներկայացրած ապրանքները եղել են արժէքաւոր՝ տեսակով, ոճով, նրբութեամբ, բացառիկութեամբ. «*Պրուսայի Հայերը մեր գաւառաբնակ ժողովրդեան մէջ ի հնուց ի վեր կարեւոր տեղ մը գրաւած են եւ ծանօթ են իրենց աշխատասիրութեամբ եւ ուշիմութեամբ: Մէկ քանին այն արհեստներէն, որոնց նմոյշները դրուած են ցուցահանդէսին մէջ, ո՛չ միայն ուրիշ նահանգներու մէջ անծանօթ մնացած են, այլ եւ բաւական յառաջացած վիճակ մը ցոյց կու տան Պրուսայի նահանգին մէջ*»՝ վկայել է *Սուրհանդակ* օրաթերթի լրագրող Աբիկ Միւպահիաճեանը[52]:

Ցուցահանդէսին ներկայացուած են եղել նաեւ ապրանքներ միայն ցուցադրութեան համար: Բուրսայի Աղի Շուկայից (թրք.՝ *Թուզ Չարշը*) թղթավաճառ Հաքիմի որդի Կարապետը ներկայացրել է մէկ արկղ ծխախոտի թղթի նմուշ[53], Բանդրմայի Հայ գիւղից (Էրմենի Քէօյ) ոմն՝ 4 կտոր գրանիտ[54], Բիլեջիկից Համբարձում աղան, Յակոբ Միւրջիքեան էֆենդին, անատոլիացի Յակոբ էֆենդին, Թիլիքեան Ռուբէն էֆենդին, Գրիգոր եւ Մինաս էֆենդիները՝ սպիտակ մետաքս, կոշտ բամբակէ շղարշ[55], Պոլսից Օննիկ Տէրունեան էֆենդին՝ յղկուած մարմարակերտ քարեր[56] (հայալեզու աղբիւրում՝ գրանիտից բազրիքներ)[57]:

Քէօթահիայի յաճապակիները

ՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայ վարպետների անունների, նրանց արհեստների նՄիւշների յիշատակումները՝ հնարաւորութիւն են տալիս ուրուագծել հայերի տնտեսական, բազմազան արհեստների տիրապետելու եւ յատկապէս Բուրսայի յայտնի արդիւնաբերական, գիւղատնտեսական ոլորտներում առաջնային տեղ զբաղեցնելու փաստը:

Այսպէս, Բուրսայից՝ ոսկերիչ Բիլեջիկլեան Կարապետ էֆենդին ցուցադրել է արծաթէ իրեր՝ պնակ, գրչատուփ, գզրոց (զարդատուփ), արծաթէ շրջանակով հայելի[58], լուսանկարիչ Փափազեան էֆենդին՝ 1,620 ղուրուշ արժողութեամբ իւղանկար, սեւ մատիտով նկար[59], նկարիչ Զարեհ Ռաֆայէլ Էֆենդին (նոյն Զարեհ Առաքելեանը - Ա.Ա.[60])՝ իւղանկար Բուրսայի համայնապատկերով[61], քանդակագործ Թահթալեանը՝ գեղանկար 1,134 ղուրուշ արժողութեամբ[62], Քալանթարեան էֆենդին (հայալեզու աղբիւրում՝ Պ. Դ. Քալանթարեանց - Ա.Ա.)՝ մօտ 850 քառակուսի սանտիմետր մակերեսով Խիւդավենդիգեար Նահանգի բարձրաքանդակ քարտէզը եւ հին արտադրութեան սանդ[63], *Երկաթագործների Շուկայ*ից (թրք.՝ Դեմիրջիլէր Չարշը) Հաջի Սարգիս Մէյխալիջեանը՝ երկաթածոյլ կշէռքներ, կապար, երկաթէ անկիւնաչափ, գայլիկոն[64], *Աթարի Շուկայ*ից (թրք.՝ Քըղան Չարշը) դարբին Յարութիւն աղան՝ ձուաձեւ փայտէ գեղազարդ տախտակ՝ վրան գաՄիւաձ պայտ, ձուաձեւ տուփ՝ վրան գաՄիւաձ պայտ եւն.[65], նոյն շուկայից ՔէօՄիւրեան Գրիգորը՝ հայելի, մարմարէ դարակաւոր պահարան, օրօրոց, սնդուկի կողքին՝ շերամի տերեւը կտրելու սարք, որն իր առաջարկած 124 ղուրուշի փոխարէն վաճառուել է 334 ղուրուշով[66], Այդինի որդի Կարապետը՝ հնաոճ գլխարկ (ֆէս)[67], *Հնավաճառի Շուկայ*ից երաժիշտներ Պօղոս եւ Լեւոն վարպետները՝ երաժշտական գործիքներ (սազ եւն.[68]), *Երկար Շուկայ*ից (թրք.՝ Ուզուն Չարշը)[69] հնավաճառ Արաբեան Փարնակը՝ արծաթէ զարդատուփ, փայտէ թուր, սեւ աչքի ուլունք, մատնիքաւոր հրացան, գորգ՝ 4,000 ղրշ. արժողութեամբ, օթոց՝ 9,100 ղրշ. արժողութեամբ, կարպետ, ոսկեթել կրծկալ, մետաքսէ կերպաս, երկու կողմից ասեղնագործ բարձի երեսներ, կրօնաւորի հագուստ (կապա), փափուկ կտորից երկար խալաթ եւն.[70], նոյն շուկայից ոսկերիչ՝ Քարահանեան Փարնակ էֆենդին՝ արծաթէ եւ արծաթազօծ իրեր՝ զարդատուփ, գօտի, խնկաման, թաս, պնակ, քառոտանի բաժակ եւն.[71], իսկ ոսկերիչ Շիշմանեան Գառնիկ էֆենդին[72]՝ արծաթէ պնակ, մարգարտեայ վզնոց, մարգարտեայ ասեղնագործ փողկապ, յախճապակէ վարդաջրաման, փղոսկրէ պատառաքաղների հաւաքածոյ, սեղանի հնաոճ սփռոց, թիկնոց, կայծքարով ատրճանակ, բաժակ եւ արծաթազօծ ափսէ, արծաթազօծ շաքարաման, արծաթէ խնկաման, արծաթեպատ հին վառօդաման, արծաթէ գօտի եւն.[73], Պօղոս Բասմաջեանը՝ ոսկեհուռ թեղանաւոր թիկնոց, գորգէ խուրջին եւն.[74], դեղագործներ Նշան էֆենդին՝ գեղեցիկ շշերով օղիներ, օշարակներ,

թուրմեր, դեղձի եւ սալորի անուշներ, պահածոներ[75], Նաջար եւ Նշան Քասաբեանները՝ ջերմաչափ[76], Քուրդիքեան էֆենդին՝ օղի, կոնիակ, հնեցուած գինի՝ թուով 171 շիշ[77], Գրիգորիս էֆենդին՝ 24 շիշ թթի օշարակ[78], Ուշաքլեան Նշան էֆենդին՝ բարձրահիւս բանուածքով թութակի, սիրամարգի պատկերով բարձեր, սադափէ ատրճանակ, աթոռ եւն.[79], *Աղի Շուկայ*ից զանգակագործ Ալեքսան վարպետը՝ տարբեր կենդանիների համար զանգեր[80], *Պղնձագործների Շուկայ*ից (թրք.՝ Բաքըրջըլար Չարշը) հաջի Յակոբ աղան՝ դռան աւանդական փականներ, ձուլածոյ սանդեր. կէս օխանոց դիրհէմ (կշռաքար), կրակարան ունելիով (աքցան), սրճաղաց[81], վաճառականներ Յակոբոս Տէր-Ահարոնեան էֆենդին[82], Մաւրուկի որդի Տիգրան էֆենդին (հայալեզու աղբիւրներում՝ Տիգրան էֆենդի Մորուքեան)[83], Միհրան Քոլէեանը[84], Պօղոս Բահրէեանը[85], *Երկար Շուկայից* Գրիգոր Բաքըրջեան ու Յարութիւն էֆենդիները[86]՝ ատլասէ, ոսկեզօծ արծաթաթելով գործուած օթոցներ, ժակէտներ, թիկնոցներ, ասեղնագործ իրեր, թաւշէ եւ ատլասէ հագուստներ, Միշտակներ, ոսկէ իրեր, կանացի եւ տղամարդու զանազան փողկապներ, մանեակներ, մետաքսէ, ատլասէ, թաւշեայ, օսլայած կերպասներ, թաշկինակներ, օթոցներ, գլխաշորեր, ծածկոցներ, մետաքսէ ասեղնագործ վարագոյրներ, շղարշներ, սրբիչներ, զանազան ափսէներ, բաժակներ եւն., իսկ վաճառականներ Քերովբէ էֆենդին[87], Խանջեան Զարեհը[88], Կարապետ Հանէեանը[89]՝ գորգեր, կարպետներ, ասեղնագործ իրեր, ծածկոցներ եւն.: Կեսարացի Եակուբեան Հայկազուն էֆենդիի ապրանքներից հետաքրքրական են եղել յատկապես Խուդաւենդիգեար Նահանգի բարձրաքանդակ քարտէզը, մետաքսէ եւ բրդեայ գորգերը[90], նոյն երկրացի Յակոբ ԹիՄիւրեան էֆենդին ներկայացրել է մետաքսէ օթոցներ, երկու գորգ, որոնցից իւրաքանչիւրի արժէքը եղել է 5,250 ղրշ.[91], իսկ Պոլսեցի կօշկակար Բաղդիկը՝ կանացի տնային թեթեւ ոտնաման (Միճակ)[92], քարսաքցի հաջի Սարգիս աղան՝ ուլունքապատ քսակ[93], *Սելջուկ Խաթուն* թաղամասից կահագործ վարպետ Մանուկ Իսքանդէրը՝ արաբանախշ (արաբեսկ) հայելի 5,000 ղրշ. արժողութեամբ[94], *Հոջա Թըփ* թաղամասից Յակոբ Լաթիֆեանը՝ բոլորաձեւ այցեքարտ[95], *Քարա Աղաչ* թաղամասից Թաքֆորը՝ մետաքսից պատրաստուած օսմանեան զինանշան[96], *Վելէդ Բեւուապ* թաղամասից պաղպաղակագործ Մարտիրոսը՝ թափշի վրայ բարձրահիւս բանուածքով պատկեր[97], *Փիրինջ Խանի* փողոցից ձուլագործ Մարկոսեան Օննիկը՝ մետաքսի գործարանների համար տաք եւ սառը ջրի պարպման ծորակներ եւ հրշէջ ջրհանի խողովակներ[98] (հայալեզու աղբիւրում Մարկոսեանի հետ յիշատակւում է նաեւ Մանուկեան ազգանունը)[99]:

Բիլեջիկից մետաքսագործ Երուանդ էֆենդին՝ ժամանակից շուտ հունտը ծլեցնելու յատուկ գործիք, բոժոժի եւ շերամի հաւաքածու[100], ոսկերիչ Ստեփան աղան՝ արծաթի վրայ փորագրուած սեւապատկեր

ապարանջան[101], իսկ նոյն անունը կրող մէկ այլ ոսկերիչ՝ սեւապատկեր փորագրուած արծաթէ գրպանի դանակ[102], Նուրիջան աղան՝ սեղանի, բազմոցի, օթոցի չթէ ծածկոցներ-բարձեր-վարագոյրներ եւն.[103], հիսարցի Կարապետը[104], *խարտեաշ* Կարապետը[105], Յարութիւն էֆենդին[106] եւս ցուցադրել են տեղական չթից կարուած զանազան ծածկոցներ, վերմակի երեսներ, ատաղձագործներ Յովհաննէս, Ստեփան, Օհան աղաները՝ ընկոյզից պատրաստուած կահկարասի[107], կարասագործ Մարիի հունտի պատեանից պատրաստուած նկարները եւս աչք են շոյել[108], իսկ կարասագործ՝ Նշանը ցուցադրել է 450 հատ թղթեայ արհեստական ծաղիկներ[109], ջին Յակոբը՝ թոփերով հագուստի կտորներ, գլխաշորեր, թաշկինակներ, զուգագուլպաներ, գինու երկարաւուն տակառներ[110], երկաթագործ վարպետ Յակոբը՝ մարմնամարզական երկաթաձողեր[111], բիլեջիկցի Յովսէփը՝ մամլած բրդից կարպետներ (թաղիք), բրդեայ համետակալներ[112], վարպետ Միսակը՝ աթոռներ[113], Անտոն եւ Ստեփան վարպետները՝ ծիրանափող 2 հատ[114], Կարապետ էֆենդին՝ պատուհանի վարագոյրներ[115], կօշկակար Յարութիւնը՝ հողաթափ[116], դերձակներ Մաթոսը[117] եւ Յովհաննէսը[118]՝ տաբատներ, հրուշակագործ Մելքոնը՝ ունաբ[119], ձուլագործ Մարտիրոսը[120]՝ կորզան[121], երկաթագործ վարպետ Թորոսը՝ բահ[122]:

Բալըքեսիրից խարազագործ Համբարձում էֆենդին՝ 8 թոփ խարազ[123]:

Ազիզիէյից վաճառականներ Յովհաննէս եւ Գրիգոր էֆենդիները՝ զարդ, ցորեն եւ գարի[124]:

Սոքուդից կօշկակար Պետրոսը ցուցադրել է կանացի մէկ զոյգ կօշիկ[125]:

Մէյխալիչից Օննիկ էֆենդին՝ հին սազեր, դեղագործ Էլմայեան Քէօրփիկ էֆենդին՝ գործուած կիսագուլպաներ[126], Չաքալ Թաղամասից երկաթագործ Կոստանդին աղան՝ գութան[127]:

Քէօթահիայից Բոյաջը օղլու Յակոբջանը[128], Արսէնեան Յովսէփ էֆենդիի գործարանը[129], Սալաբաշեան Յարութիւն եւ Հաջի Քալոսեան Կարապետ էֆենդիները[130] ներկայացրել են զանազան գորգեր, Սեմիդի որդի Խաչիկը եւ Միհրանը՝ վարագոյրներ, կաշուի տեսականի[131]:

Ցուցահանդէսում լայն տարածք է զբաղեցրել եւ այցելուների, լրագրողների, պաշտօնեաների ուշադրութեանն է արժանացել յատկապէս Քէօթահիայից յախճապակու գործարանատէր Միհրան Մինասեան էֆենդիի տրամադրած 1,327 հատ յախճապակեայ գինու, ջրի շշեր, կժեր, թասեր, ծաղկամաններ, մոխրամաններ, բղուղներ, մրգամաններ, ջրամաններ, բաժակներ, ափսէներ, պնակներ, աղցանամաններ, ձուամաններ եւն.[132]:

Փազար Քէօյից՝ Ենի Քէօյ Նահիէի քաղաքապետարանի ղեկավար Շարաբխանեան Մարգար էֆենդին եւ Ենի Քէօյում «Մոնփելիէ» Երկրագործական Վարժարանի շրջանաւարտներից Քարաղոսեան

էֆենդին ներկայացրել են կոնիակ, օղի, հնեցուած գինի, ձիթաիւղ, ձիթապտուղ[133]:

Բանդրմայից վարպետ Յովհաննէսը՝ երկաթէ գութան, Էրմենի Քէօյից՝ կոշտ խսիր[134]:

Էսքիշեհիրից վարպետներ Ստեփանը, Պօղոսը, Ջենդերէջեան հաջի Յակոբը, Միհրան Օհաննիսեանը, Քարաքաշեան Յակոբոս էֆենդին՝ մկրատներ, կօշկակարի գործիքներ, կնգուղ, անգորայից Միւշտակներ, օթոցներ, արծաթէ թասեր[135]:

Քարահիսարից Քափլանի որդի վարպետ Մինասը՝ փայտէ պայտ, փոքր սեղան, գաւազան, մոմակալ, ոսկերիչ վարպետ Նշանը՝ ծխափող, ապարանջան, գաւազանագլուխ եւն.[136], Սէյրանի որդի վարպետ Յովհաննէսը՝ հալուէ, վեցագլուխ պատերազմական գործիք[137], իսկ Պետիկի որդի վարպետ Գրիգորը՝ ծալովի որսորդական հրացան[138], ոսկերիչ Նշանը՝ ծխափող, փայտէ կօշիկ վզնոցով, նարգիլէի ծխաման, ապարանջան եւն.[139]:

Պոլսից Տիգրան Քէյուէլեանը՝ բազմոցի գորգ, օթոցներ[140], Իսագուլեան (հայալեզու աղբիւրներում՝ Յ. Իսաղուլեան) էֆենդին՝ պահածոներ, թէյ եւն.[141]:

Անկարայից միակ մասնակից Արամ էֆենդին՝ Անկարայի բրդեայ պաստառ 64,520 մ. երկարութեամբ[142]:

Սպարթայից Դոկտոր Պետրոս եւ Ընկերութիւնը՝ արօր, օթոցներ[143], հաջի Թնաշի որդի Արտեմը՝ գօտիներ[144]: Յատկապէս այցելուներին հիացրել է Դոկտոր Պետրոսի բրդեայ գորգի վրայ հիւսուած պատկերը՝ բնագիր լուսանկարի հետ կէտ առ կէտ նմանութիւն ունենալու հանգամանքով[145]:

Կեսարիայից Գրիգոր Քոնդակչեան (Գրիգոր Գունտաքճեան[146]) էֆենդին՝ մետաքսեայ օթոցներ[147]:

Քըրշեհիրից Չաքըջիի որդի Մինասը՝ օրօրոցի բարձերի տեսականի[148]:

Այս վարպետներից ոմանք (Շիշմանեան, Յակոբոս Տէր-Ահարոնեան, Տիգրան Մօրուքեան, Միհրան Մինասեան, Շարապխանեան, Մարկոսեան, Տէրունեան, Բոյաջըօղլու Յակոբջան, Դոկտ. Պետրոս էֆենդի, Նշան Ուշաքլեան, Յ. Իսաղուլեան եւն.) յիշատակուել են նաեւ Պոլսում տպագրուող հայալեզու օրաթերթերում[149]:

Հայալեզու աղբիւրներում յիշատակուած են 8 հայ վարպետի անուններ եւս, որոնք թուրքերէն աղբիւրում բացակայում են: Մեսիա Գասապեան եւ Հաջի Գալուստեան էֆենդիները ցուցադրել են Կեսարիայի մետաքսեայ գորգեր[150]: «Օրիորդաց Վարժարան»ի ուսուցչուհի Տիկին Ռ. Առաքելեանի «Փադիշահիմ Չոք Եաշա» վերտառութիւններով երկու ձեռագործներն արժանացել են բարձր գնահատանքի[151]: Արհեստաւոր Մկրտիչ էֆենդի Մէյխալիջեանը ներկայացրել է բոժոժի արտադրութիւնը ցուցադրող մեքենայ[152]: Երկրագործական գործիքների սրահում մեծ ուշադրութիւն է

գրաւել Յովհաննէս էֆենդիի մշակած գործիքը՝ «Աթէշ զարֆա» (Կրակէ ծրար) անունով[153]: Սահակ Լաթիֆեանը ցուցադրել է կողովի մէջ սեւ եւ կանաչ ձիթապտուղներ[154]: Պոլսից վաճառական Կ. Եաւրուեանը ներկայացրել է թէյի եւ պահածոների ընտիր նՄիւշներ[155]: Քալանթարեան Վարժարանի արտադրութիւններից ցուցադրուել է 100 օսմանեան ոսկի գնահատուած միակ մետաքսեայ մեծադիր նկարը[156]:



١٠ تموز ٣٢٥ بروسه سركيسنك رسم كشادى
L'inauguration de l'Exposition régionale de Brousse le 10/23 Juillet 1909

1909ի ցուցհանդէսի պաշտօնական բացումը

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՒ ՎԱՃԱՌՔ

Հայերը ոչ միայն ցուցադրել են իրենց ապրանքները, այլեւ բերել են իրենց մասնակցութիւնը ցուցահանդէսի կազմակերպական հարցերում եւ ունեցել պարտականութիւններ:

Ցուցահանդէսի ճարտարապետը եղել է Գամիկ էֆենդի ԳիւՄիւշեանը, իսկ ցուցապահարանների պատրաստողների շարքում են հայ վարպետներ՝ Սարգիս Գալեանն ու Գարեգին Մաւեանը[157]:

Ցուցահանդէսի յանձնաժողովի անդամներ են եղել Բուրսայի Համիդիէ Արհեստագործական Վարժարանի տնօրէն Մանուկ էֆենդին, նահանգի վարչական ժողովի անդամներից Սերոբջան էֆենդին[158], վաճառքի պատասխանատուներից՝ Գրիգոր էֆենդի Յակոբեանը[159], Յակոբ Լաթիֆեան էֆենդին, Օննիկ էֆենդին[160], գանձապետերից՝ Գրիգոր բէյ Նահապետեանը[161], Ազնիւ էֆենդին Ութուշեանը[162], ցուցադրութեան պատասխանատու՝ Պետրոս էֆենդին[163], մեքենագէտ՝ Մկրտիչ էֆենդին[164],

Քէօթահիայի յախճապակիների մասնաճիւղի պատասխանատու՝ Մինասեան էֆենդին[165]:

Ցուցահանդէսում հայերի ցուցադրած ապրանքներից յատկապէս վաճառուել են Յակոբոս Տէր-Ահարոնեանի (որն արժանացել է նաեւ վկայագրի[166]), Մաւրուկի որդի Տիգրան էֆենդիի ցուցադրած ապրանքները, *ջին* Յակոբի թաշկինակները, կերպասները, գլխաշորերը, զուգագուլպաները, Մինասեան էֆենդիի Քէօթահիայի յախճապակեայ իրերն ու գորգերը, Սեմիդ օղլու Խաչիկի եւ Միհրանի վարագոյրներն ու կաշուեղէնը, Շարաբխանեան Մարգար էֆենդիի գինիները, ձիթաիւղն ու ձիթապտուղը, Քարաղոսեան էֆենդիի կոնիակները, հնեցուած գինիները, քարահիսարցի Քափլանի որդի վարպետ Մինասի ապրանքները՝ փայտէ պայտ, փոքր սեղան, գաւազան, մոմակալ, սպարթացի Դոկտոր Պետրոս էֆենդիի երեք գորգերը՝ (4.60x3.35) մեծութեամբ[167]:

ԵՐԿՐՈՐԴ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Բուրսայի երկրորդ՝ 1909ի ցուցահանդէսը կազմակերպուել է սուլթան Մեհմէդ 5րդի (Մէհմէդ Ռեշադ, 1909-1918) հովանաւորութեամբ:

Թուրքական աղբիւրները վկայում են, որ այս ցուցահանդէսը բաւականին մեծ է եղել 1906ի ցուցահանդէսի բաղդատմամբ[168]: Սակայն ի տարբերութիւն թուրքական աղբիւրի, ժամանակի Պոլսում հրատարակուող հայալեզու *Ազատամարտ* թերթի լրագրող Զ. Գրիգորը նշում է, որ Ցուցահանդէսը չի ունեցել նախորդի ճոխութիւնը, եղել է աղքատիկ, նոյնիսկ եղել են վարպետներ, որոնք ինչ-ինչ պատճառներով չեն ցուցադրել իրենց աշխատանքները[169]:

Ցուցահանդէսի կազմակերպման համար նոյն տարուայ Մարտի 24ին նահանգապետ Ազմի բէյի գլխաւորութեամբ կազՄիւել է 14 հոգու յանձնաժողով[170]: Ընդգրկուել են նաեւ հայ պաշտօնեաներ՝ Բուրսայի քաղաքապետարանի ղեկավար Ստեփանը, Նահանգի վարչական ժողովի անդամներից Սերվիչեան էֆենդին[171]:

1909 Յուլիսի 23ին բացուել է ցուցահանդէսը, որը նուիրուել է 1908ի՝ Սահմանադրութեան հռչակման առաջին տարելիցին[172]: Այդ առթիւ Բուրսա են ժամանել հիւրեր, հիւպատոսներ, Պոլսում հրատարակուող, ինչպէս նաեւ օտարալեզու թերթերի լրագրողներ[173]:

Ցուցահանդէսի համար ընտրուել է քաղաքապետարանի շէնքը[174], որի մասին մաՄիւլը արձանագրել է. «*Քաղաքի կեդրոնը, Պելէտիյէի շքեղ ու ծաղկազարդ պարտէզին մէջ սարքուած է ան: Ասիական նաւագածուներ ու երգիչները պարտէզի աւազանին շուրջը կը նուագեն: Քանի մը քայլ անդին կանգնած է հոյակապ շէնքը Պելէտիյէի՝ երկաթի վանդակէ դռնով, որ բաց է ...*»[175]:

Ցուցահանդէսը գործել է շուրջ երկու ամիս, մինչեւ Սեպտեմբերի 13[176] (հայալեզու աղբիւրում՝ Սեպտեմբեր 3[177]):

Ցուցահանդէսի կազմակերպական եւ ընթացիկ գործերի համար ծախսուել է 1,719,900 ղրշ.[178]:

Ցուցահանդէս է այցելել սուլթան Մեհմէդ Ռեշադն իր որդիների եւ շքախմբի հետ[179]: Շրջել է տաղաւարներով, յայտնել իր գոհունակութիւնը, գնումներ է կատարել, այդ թւում՝ Մինասեանի յախճապակէ իրերից[180]:

Նահանգապետ Ազմի բէյը սուլթանին արծաթեայ սկուտեղով, սպիտակ մետաքսէ թաշկինակի մէջ փաթաթուած՝ *«Hatira-i Teşrif-i Hūmayun 18 Şaban 327»* (Ի յիշատակ սահմանդրութեան, ՀՋՐ. 1327 Շաբան ամսի 18րդ օրը = 1909 Սեպտեմբեր 3) գրութեամբ ցուցահանդէսի ոսկեայ շքանշանն է նուիրել[181]:

Ցուցահանդէսի հիմնական ճիւղերը բովանդակել են ձեռային աշխատանքներ, ուսումնական նիւթեր, արդիւնաբերական ապրանքներ, հանքային եւ անտառային բերքեր, կերպասեղէն, գիւղատնտեսական գործիքներ, մարդու աշխատանքով ստեղծուած բարիքներ[182]:

Ցուցադրուել են Գիւղատնտեսական Դպրոցի երկրագործական գործիքները, Այալըքի մաքուր զտուած ձիթաիւղեր, օճառներ, ձիթապտղից պատրաստուած Կիմլէյիկի բազմագոյն եւ բազմաձեւ օճառներ, փոքր տուփերով Էդրեմիդի օճառներ, Միւդանիայի, Բուրհանէի, Իզնիկի, Կիմլէյիկի ձիթապտուղների տեսականի, Քէօթահիայի, Իզնիկի, Էդրեմիդի, Քուդուսի, Կիմլէյիկի այգիների բերքից խաղող, բալ, նուշ եւն., Էդրեմիդի խաղողից պատրաստուած դոշաբ, Բուրսայի կաշուեղէն ու կաշեգործութեան նՄիւշներ, դպրոցական պայուսակներ, փամփշտակալներ, զարդարուն թամբեր, որոնք առանձնացել են իրենց նրբութեամբ եւ դիմացկունութեամբ, Բուրսա Նահանգի բոլոր հանքանիւթերն ու փայտի տեսակները, սպիտակ ու գունաւոր քարերի, ոսկու, արծաթի, պղնձի, կապարի, երկաթի, հանքածուխի, կաւիճի, աղի եւն.ի հանքանՄիւշներ, տեղական բոլոր սերմերը՝ ցորենի 4-5 տեսակ, սեւ ու սպիտակ գարի, սիսեռ, ոսպ, եգիպտացորեն, կտաւատ, լոբի, բակլայ, ափիոն, մանանէխ, վարսակ եւն.՝ շարուած են եղել նպարավաճառի խանութի ձեւով՝ քսակներով եւ ապակիներով, ապակեայ արկղերի մէջ ցուցադրուել են Եւրոպայից բերուած շերամի որդի եւ թիթեռնիկի մեծադիր նՄիւշներ, տեղի Երկրագործական Վարժարանի համար Եւրոպայից բերուած զանազան մեքենաներ եւ տեղական գործիքներ՝ խոփ, բահ, գերանդի, մանգաղ, բրիչ եւն., տեղի արհեստաւորների ձեռքի աշխատանքներ՝ փոքրիկ ջրաղացներ, կժեր, ափսէներ, նախշերով փորագրուած բաժակներ, սանդեր եւն., տեղի վարպետների փայտարուեստի նՄիւշներ՝ նախշափոր սեղաններ, արկղեր, դռներ, հայելու շրջանակներ, սրեր, դանակներ, փայտի փորագրման գործիքներ եւն., տեղական ծխախոտ, քաղցրաւենիք, նկարներ, թուրմեր, հնեցուած գինիներ, կոնիակներ, օղիներ, յախճապակեայ բաժակներ, ափսէներ, ծաղկամաններ, ջրամաններ, կաւէ ամաններ, հնաոճ իրեր, Պոլսից

զանազան հացահատիկներից պատրաստուած թանրիճներ (չորթանապուր, թրք.՝ *թարխանա*) եւն.[183]:

Մեծ բաժին է յատկացուել տեղական գորգագործութեանը եւ կերպասեղէնի արտադրութեանը, ձեռագործներին: Յատկապէս աչքի են ընկել Քէօթահիայի գորգերը՝ 2-25 ոսկի արժողութեամբ եւ մետաքսէ գործուածքները, Քէօթահիայի յախճապակիները, Միւդանիայի բամբակէ գործուածքները, Բուրսայի սրբիչներն ու մետքասէ գործուածքները, որոնք առանձնացել են իրենց նրբութեամբ եւ գեղեցկութեամբ[184]:

Հայերն այս ցուցահանդէսին նոյնպէս մասնակցել են: Առկայ նիւթերի հիման վրայ յիշատակենք ցուցահանդէսին մասնակցած որոշ հայերի անունները:

Այսպէս, շէնքի դռնից ներս՝ աջ եւ ձախ հատուածներում շարուած են եղել արդէն իսկ նախորդ ցուցահանդէսից յայտնի Քէօթահիայի՝ Մինասեանի գործարանի ծաղկաւոր յախճապակեայ ափսէները, ջրամանները եւ այլ տնային իրերը[185]:

Նախորդ ցուցահանդէսից յայտնի բուրսացի Օննիկ Մարկոսեանը ցուցադրել է այս անգամ եւս եւրոպականի նմանութեամբ իր պատրաստած ջրհան մեքենան՝ ջրի ամբարի տեղով, որտեղից լցուած ջուրը երկու լծակի միջոցով դուրս է հոսել[186]:

Ցուցահանդէսը լուսաբանող մեր տրամադրութեան տակ եղած թուրքերէն ամսագրի համար 8ում նոյնպէս յիշատակուել է Օննիկ Մարկոսեանի *«ճարպկութեամբ պատրաստուած»* ջրհան մեքենան (աղբիւրում՝ Մարկոսի որդի Օննիկ աղա)՝ իրաւացիօրէն կարեւորելով նրա կիրառութիւնը գործաւորութեան միջավայրում[187]:

Բուրսայի Արհեստագործական Վարժարանի սաների ձեռքի աշխատանքների կողքին ցուցադրուել է բալըքեսիրցի Թաքֆոր Մարգարեանի երկաթէ դրամարկղը, որի դուռը չորս կողմից երկաթէ հաստ գլուխներով է փակուել՝ միայն վարպետին եւ դրամարկղի տիրոջը յայտնի բանալիով եւ յատուկ շարժումով[188]:

Ցուցահանդէսի Միւտքի աջ սենեակում տեղաւորուել են նախորդ ցուցահանդէսից յայտնի բուրսացի դեղագործ Քուրդիքեանի 22 տարուայ հնեցում ունեցող գեղեցիկ շշերով գինիները, օղիները, կոնիակները, գարեջրերը եւ թուրմերը[189]: Կից սենեակում՝ ալկոհոլի մէջ լուծուած վարդի, կիտրոնի, մանուշակի, անանուխի, ելակի եւն.ի թուրմեր՝ բուրսացի Սուրեանի խանութից[190]:

Գեղեցիկ խսիրէ շշերով իր օղիներն ու կոնիակներն է ցուցադրել Էդրեմիդից Փափազի որդին[191]:

Տեղական ջրաղացատէր Ջեւահիրջեանը ցուցադրել է չմշակուած ցորենից մաքուր ալիւր ստանալու 35 տեսակ մեքենայական փոփոխութիւնների գործնական նՄիշները՝ 35 ապակեայ ամանների մէջ դրուած[192]:

Փայտի նՄիշների ցուցասրահում ուշադրութեան է արժանացել բուրսացի յայտնի կահագործ վարպետ Մանուկի պատից կախուած աստղաձեւ նրբակերտ 37 տեսակ փայտի կտորներից պատրաստուած սեղանի երեսը, որի մէջտեղում փայտէ կտորներով պատկերուած է եղել լուսին՝ աստղով, ստորին հատուածում փայտէ տառերով գրուած «Փադիշահըմ չոք եաշա» թուրքերէն գրութեամբ հմտութեամբ պատրաստուած երեսը, որ թուացել է այցելուներին, թէ փայտերն իրար են միացուել առանց գամի[193]:

Տեղական ծխախոտների բաժնում ցուցադրուել է ՔէօՄիւրեան Գրիգորի շերամի տերեւները կտրելու սարքը, որը նախորդ ցուցահանդէսի ժամանակ նոյնպէս ցուցադրուել է[194], իսկ տեղական քաղցրաւենիքների բաժնում իրենց տեղն են զբաղեցրել Սարեան էֆենդիի եւրոպականի հետ մրցող խմորեղէններն ու տուրմի տեսակները[195]:

Նախորդ ցուցահանդէսից յայտնի բուրսացի դեղագործ Նշան էֆենդին ցուցադրել է այս անգամ «Լիւքսի» գրութեամբ լուսամփոփներ, երկու դինամօ մեքենայ եւն.:

Յակոբոս Տէր-Ահարոնեանն այս ցուցահանդէսում եւս ունեցել է իր տաղաւարը՝ գեղեցիկ կերպասներով եւ բաղնիքի պարագաներով[196]:

Իսկ տեղի երկաթուղային արհեստանոցի երկրորդ տարուայ 16 աշակերտների (6 հայ, 4 թուրք, 3 յոյն, 2 ֆրանսիացի եւ 1 գերմանացի) ցուցադրած ձեռքի աշխատանքների մէջ ամենաբարդ գործիքը եղել է հայ աշակերտ Արմենակ Քէօսեանի ձեռքի աշխատանքը[197]:

Ոսկերչութեանն ու ժամագործութեանը յատկացուած ցուցասրահում իր ոսկէ եւ արծաթէ քորոցներն ու բաժակակալները, անօթներն ու այլ արժէքաւոր իրերն է ցուցադրել բուրսացի Գառնիկ Շիշմանեանը[198]:

Իզմիրից Սարգիս էֆենդին ցուցահանդէսին ներկայացել է իր նկարներով[199]:

Այս ցուցահանդէսին եւս անդրադարձել են հրապարակումներով ինչպէս տեղի, այնպէս էլ օտարալեզու թերթերը՝ յատկապէս բուլղարական թերթերը[200]: Նոյնիսկ հրատարակուել է ցուցահանդէսը լուսաբանող ամսագիր: Ամսագիրն ունեցել է 10 համար[201]:

Օսման Քէօքէրը իր *Armenians in Turkey 100 Years Ago* գրքում նշել է. *«Ցուցադրուող ապրանքների զգալի մասը պատկանում էր հայ արդիւնաբերողներին»*[202]:

Ցուցահանդէսի եւ յատկապէս ցուցահանդէսում հայերի մասնակցութեան վերաբերեալ ընդհանրական գնահատական է տալիս Սոֆիայի *Աքշամ Փոսթա* (բլղ.՝ Վեչերնա Փոշթա, 1900-1914) բուլղարական թերթի լրագրող Պիտէր Դասկալովը՝ արձանագրելով. «*Ցուցահանդէսում բոլոր ցուցադրուող ապրանքները հայերին էին պատկանում, նոյնիսկ իրաւացիօրէն կարելի էր այն համարել «Հայկական ցուցահանդէս» կամ «Հայկական շուկայ»: Մինչ Բուրսա նահանգի թուրքերը վայելում էին օրը*

շպրոուանների կողքին նստած, հայերի ձեռքում էր աշխատանքն ու հարստությունը»[203]:

ՎԵՐՋԱԲԱՆ

Օսմանեան Կայսրութիւնում կազմակերպուած այս երկու ցուցահանդէսները հնարաւորութիւն են տուել տեսնելու, գնահատելու երկրի, նահանգի արդիւնաբերական եւ տնտեսական պատկերը:

Ցուցահանդէսները չեն եղել լոկ այցելութեան վայրեր, այլ հիմնականում կազմակերպել են երկրի ներքին առեւտուրը, խթանել միջազգային վաճառականութեան եւ արդիւնաբերութեան առաջադիմութիւնը, զարգացումը:

Այն արտացոլել է Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող ազգերի ընկերային վիճակը: Տուեալ պարագայում՝ կայսրութեան տնտեսական, հասարակական, մշակութային զարգացման կեանքում հայութեան մշտապէս ունեցած դերն ու նշանակութիւնը, ստեղծած եւ ցուցադրած արժէքները:

Դառն իրականութիւն է, որ հայ ժողովուրդի արեւմտահայ հատուածը, Օսմանեան Կայսրութեան տիրապետութեան տակ 100 տարի առաջ կորցրեց իր դարերի նիւթական, մշակութային հարստութիւնը եւ ֆիզիկական կարողութիւնը:

Անցած 100 տարիներին հայութիւնը պայքարել է եւ գալիք տարիներին շարունակելու է պայքարել այդ ամէնը վերստանալու նշանաբանով:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] G. Korkmaz, H. Eken, *Türkiye'de Fuarciliğin Ilk Adimlarindan*, 1909 Bursa Sergisi, Bursa Araştirmalari Merkezi, 2013, էջ 5, http://yayinlar.bursa.com.tr/1909-bursa-sergisi/(ss.1-19):

[2] Նոյն:

[3] Korkmaz, Eken, էջ 6:

[4] Արման Կիրակոսեան, Բրիտանական Դիւանագիտութիւնը եւ Արեւմտահայութեան Խնդիրը, էջ 21, http://armenianhouse.org/kirakossian-a/british-diplomacy/ch1.html/):

[5] Korkmaz, Eken, էջ 6:

[6] Նոյն, էջ 8:

[7] Նոյն:

[8] Նոյն, էջ 9:

[9] Նոյն, էջ 10:

[10] Բուրսա Նահանգի (նոյն՝ Խուդաւենդիգեար նահանգը) բնակչութեան թիւը հասել է 1,250,000: Մինչ 1912ը Բուրսա Նահանգում բնակուել են 82 հազար հայ, որոնցից միայն 10 հազարն ապրել է նահանգի մայրաքաղաքում:
Եղել է Օսմանեան Կայսրութեան արդիւնաբերական առաջատար կենտրոններից: Ի. դարում տարածաշրջանը եղել է մետաքսագործութեան

կենտրոն: Յատկապէս յայտնի է եղել իր սրբիչներով, բաղնիքի պարագաների, կերպասեղէնի, յախճապակեայ իրերի արտադրութեամբ: Նահանգի հիւսիսային եւ արեւմտեան շրջանները հարուստ են եղել ցորենի, գարու (արտահանուել է Մ. Բրիտանիա), եգիպտացորենի, լոբու արտադրութեամբ: Ողջ տարածաշրջանը աչքի է ընկել նաեւ ափիոնի (յատկապէս Կարահիսարի սանջակը), ծխախոտի արտադրութեամբ, հանքային ջրերով: Հանքարդիւնաբերութիւնը եւս զարգացած է եղել, արտահանուել է քրոմ եւ երկաթ: Մարմարա Ծովի շրջանում ձիթապտղի արտադրութիւնը մեծ չափերի է հասել: Բուրսան աչքի է ընկել ինչպէս վայրի անտառներով, այնպէս էլ պտղատու այգիներով (Prof. Dr. Ramazan Özey, *Hüdâvendigâr Vilayeti, Karesi Ve Biga Mutasarrifliklari*, Marmara Coğrafya Dergisi Sayi: 7, OCAK- 2003, İstanbul, էջ 2-4):

[11] Համապատասխանում է Ռումի օրացոյցի՝ 1322, իսկ Հիջրայի՝ 1324ին:

[12] Համապատասխանում է Ռումի օրացոյցի՝ 1325, իսկ Հիջրայի՝ 1327ին:

[13] Korkmaz, Eken, էջ 12:

[14] Բուրսայի 1906ի ցուցահանդէսի, ընդհանուր պատկերը ներկայացնելու համար օգտագործուել են ցուցահանդէսի մասին Բուրսայում հրատարակուած օսմաներէն գրքոյկի տեղեկութիւնները (دفتر، ١٩ اغستوس ١٣٢٢ تاريخنده برنجى دفعه اوله رق كشاد اولنان، بروسه مخصولات و معمولات سركسى، ١٣٢٤، خداوندكار ولايتى مطبعسنده طبع اولنمشدر, որի թարգմանութիւնը կատարել ենք առաջին անգամ: Գրքոյկի առաջին էջերը նուիրուած են ցուցահանդէսի կազմակերպման աշխատանքներին, ընդգրկում է ցուցահանդէսը եւ ցուցահանդէսի կանոնադրությունը ներկայացնող բաժիններ եւն., այնուհետեւ ըստ կազաների ներկայացում են աղիւսակներ, որտեղ նշուած են ցուցադրուող ապրանքների տէրերի անունները, ապրանքատեսակը, ապրանքի քանակը եւ գինը, վաճառուած ապրանքի քանակն ու գինը (*գրքոյկը տրամադրել է բանասէր Միհրան Մինասեանը):* Այդ թուերին Պոլսում հրատարակուող *Սուրհանդակ, Բիզանդիոն, Ազատամարտ* օրաթերթերի 1906ի եւ 1909ի ցուցահանդէսը լուսաբանող յօդուածները սիրով տրամադրել է հայագէտ Անահիտ Աստոյեանը: Երկուսին էլ յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

[15] «Պրուսայի Ցուցահանդէսը», *Սուրհանդակ Օրաթերթ*, 27 Մարտ, Պոլիս, 1906:

[16] «Պրուսայի Ցուցահանդէսը, Պաշտօնական Բացում, Հեռագիր Մեր Մասնաւոր Թղթակցէն, Պրուսա, 19 Օգոստոս», *Սուրհանդակ Օրաթերթ*, 21 Օգոստոս, Ը. տարի, թիւ 2291, Կ. Պոլիս 1906:

[17] Նոյն:

[18] «Պրուսայի Ցուցահանդէսը, Պաշտօնական Բացում...»:

[19] Նոյն. նաեւ՝ Աբիկ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարարուեստական Ցուցահանդէսը», *Սուրհանդակ*, Ը. տարի, թիւ 2292, Պոլիս, 22 Օգոստոս 1906:

[20] دفتر، ١٩ اغستوس ١٣٢٢ تاريخنده برنجى دفعه اوله رق كشاد اولنان، بروسه مخصولات و معمولات سركسى նաեւ՝«Պրուսայի Ցուցահանդէսը, Պաշտօնական Բացում...»:

[21] دفتر، س س ٨٠- ٧١

[22] Korkmaz, Eken, էջ 11. նաեւ՝ دفتر،س*٢

[23] دفتر، س٨٠

[24] Korkmaz, Eken, էջ 11:

[25] دفتر ، س٣★ նաեւ՝ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարարուեստական», *Սուրհանդակ*, 22 Օգոստոս 1906, նաեւ՝ Աբիկ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարարուեստական Ցուցահանդէսը, Դարձեալ Ցուցահանդէսի Շուրջ», *Սուրհանդակ*, Ը տարի, թիւ 2293, Պոլիս, 23 Օգոստոս 1906:

[26] Նոյն:

[27] Korkmaz, Eken, էջ 11:

[28] «Պրուսայի Ցուցահանդէսը, Պաշտօնական Բացում...». նաեւ՝ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարարուեստական», 22 Օգոստոս 1906:

[29] Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարարուեստական», 22 Օգոստոս 1906:

[30] Նոյն:

[31] Նոյն:

[32] دفتر ، س ٨٦. նաեւ՝ Korkmaz, Eken, էջ 11:

[33] «Պրուսայի Ցուցահանդէսը, Պաշտօնական Բացում...». նաեւ՝ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 22 Օգոստոս 1906. նաեւ՝ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 23 Օգոստոս 1906:

[34] Աբիկ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական Ցուցահանդէսը, Նամակ Մեր Մասնաւոր Թղթակցէն», 22 Օգոստոս, 1906:

[35] Korkmaz, Eken, էջ 11:

[36] دفتر ، س٣★.

[37] Ցուցասրահների մասին տե՛ս նաեւ՝ دفتر ، س٢★

[38] دفتر ، , س٣★.

[39] Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», *Սուրհանդակ*, 22 Օգոստոս 1906:

[40] Աբանի = աբա (թրք.՝ aba), խիտ գործուած բրդէ կտորից (աբայից) կարուած տղամարդու վերնազգեստ, լայն թեւերով (Ստեփան Մալխասեանց, *Հայերէն Բացատրական Բառարան, Հ. 1*, Հայկական ՍՍՌ Պետական Հրատ., Երեւան, 1944, Ցուցակ 1, էջ 1):

[41] Աբիկ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական Ցուցահանդէսը, Դարձեալ», *Սուրհանդակ*, 23 Օգոստոս 1906:

[42] Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական Ցուցահանդէսը», *Սուրհանդակ*, թիւ 2298, 28 Օգոստոս 1906:

[43] Թութունի, ծխախոտի արտադրութեան վարչութիւն:

[44] Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 22 Օգոստոս 1906:

[45] Նոյն:

[46] Նոյն:

[47] Նոյն, նաեւ՝ دفتر ، س٢★

[48] Նոյն:

[49] «Պրուսայի Ճարտարուեստական Ցուցահանդէսը», 28 Օգոստոս 1906:

[50] Korkmaz, Eken, էջ 11:

[51] Հաշուարկը կատարուել է մեր կողմից ըստ دفتر ، ١٩ اغستوس ١٣٢٢ تاریخنده برنجی دفعه اوله رق کشاد اولنان ، بروسه محصولات و معمولات سرکسی ، գրքի:

[52] Աբիկ Միւպահիաճեան, «Ակնարկ Մը Պրուսայի Հայ Ժողովուրդին Վրայ», *Սուրհանդակ*, թիւ 2296, 26 Օգոստոս 1906:

[53] دفتر، س ١٢

[54] دفتر، س ٦٤

[55] دفتر، س س٤٠ –٣٩

[56] دفتر، س ٧١ նաեւ՝ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 23 Օգոստոս 1906:

[57] Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական Ցուցահանդէսը», 23 Օգոստոս 1906:

[58] دفتر، س ٣

[59] Նոյն:

[60] «Պրուսայի Ցուցահանդէսը», *Բիւզանդիոն*, Օգոստոս 28-10 Սեպտեմբեր 1906, էջ 3:

[61] دفتر، س ٢١

[62] دفتر، س١٩

[63] دفتر، س ١٦ նաեւ՝ «Պրուսայի », 1906, Օգոստոս 28-10 Սեպտեմբեր, էջ 3:

[64] دفتر، س ٥

[65] Նոյն:

[66] دفتر، س س ١٤–١٥

[67] دفتر، س١٩

[68] دفتر، س س ٥–٦

[69] Փողոցային (բաց) շուկայ:

[70] دفتر، س ٦, նաեւ՝ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական Ցուցահանդէսը», 23 Օգոստոս 1906:

[71] دفتر، س ٧

[72] Ընդգրկուել է նաեւ Համիդիյէ Արհեստագործական Վարժարանի հոգաբարձուների կազմի մեջ (Միւպահիաճեան, «Ակնարկ Մը Պրուսայի...»):

[73] دفتر، س س ٦–٧

[74] دفتر، س ٧

[75] دفتر، س ٨

[76] Նոյն:

[77] دفتر، س س١٣ -١٢

[78] دفتر، س ١١

[79] دفتر، س س ١٧–١٨

[80] Նոյն:

[81] دفتر، س٢٣

[82] دفتر، س١٠

[83] دفتر، س س ١٠–١١

[84] دفتر، س ١٣

[85] Նոյն:

[86] دفتر، س٢١

[87] دفتر، س١٨

[88] دفتر، س ١٩

[89] Նոյն:

[90] دفتر، س ١٥

[91] دفتر، س ٢٠

[92] دفتر، س ١٨

[93] دفتر، س٢٠

[94] دفتر، س٨

[95] دفتر، س١٨

[96] دفتر، س ١٩

[97] دفتر، س٢٢

[98] Նոյն:

[99] Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 23 Օգոստոս 1906:

[100] دفتر، س ٣٧

[101] Նոյն:

[102] Նոյն:

[103] Նոյն:

[104] Նոյն:

[105] دفتر، س٣٨

[106] دفتر، س ٤٠

[107] دفتر، س س ٣٧-٣٩

[108] دفتر، س ٣٨

[109] دفتر، س ٤٠

[110] Նոյն:

[111] Նոյն:

[112] دفتر، س٣٩

[113] Նոյն:

[114] دفتر، س ٤٠

[115] Նոյն:

[116] دفتر، س٣٨

[117] دفتر، س ٤٠

[118] Նոյն:

[119] Նոյն:

[120] Նոյն:

[121] Պողպատէ տախտակ աստիճանաբար փոքրացող ծակոտիներով, որոնց միջոցով մետաղի թելը [ոսկեթելը] ձգելով (կորզելով) հետզհետէ բարակացնում են (Ստեփան Մալխասեանց, *Հայերէն Բացատրական Բառարան, Հ. 2*, Հայկական ՍՍՌ Պետական Հրատ., Երեւան, 1944, էջ 477):

[122] دفتر، س ٤٠

[123] دفتر، س ٥٠

[124] دفتر، س ٥٤1 գրիւը հաւասար է 9.792 գրամի:

[125] دفتر، س٥٧

[126] دفتر، س ٥٩

[127] Նոյն:

[128] دفتر، س ٦١

[129] Նոյն:

[130] Նոյն:

[131] Նոյն:

[132] دفتر، س س ٦٠-٦١

[133] دفتر، س ٦٣

[134] دفتر، س ٦٤

[135] دفتر، س س ٦٧

[136] دفتر، س ٦٩

[137] دفتر، س س ٦٩-٧٠

[138] دفتر، س ٧٠

[139] دفتر، س٦٩

[140] دفتر، س٧١

[141] دفتر، س٧٤

[142] دفتر، س٧٧

[143] Նոյն:

[144] دفتر، س٧٨

[145] Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 22 Օգոստոս 1906. նաեւ՝ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարարուեստական», 23 Օգոստոս 1906:

[146] Աբիկ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 23 Օգոստոս 1906:

[147] دفتر، س٧٩

[148] دفتر، س٨٠

[149] Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 22 Օգոստոս 1906. նաեւ՝ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարարուեստական», 23 Օգոստոս 1906. նաեւ՝ «Պրուսայի Ճարտարարուեստական Ցուցահանդէսը», 28 Օգոստոս 1906. նաեւ՝ «Պրուսայի Ցուցահանդէսը», 1906, Օգոստոս 28-10 Սեպտեմբեր, էջ 3:

[150] Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 23 Օգոստոս 1906:

[151] Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 22 Օգոստոս 1906:

[152] Միւպահիաճեան, «Պրուսայի», 23 Օգոստոս 1906:

[153] Նոյն:

[154] Աբիկ Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական Ցուցահանդէսը», *Սուրհանդակ,* 25 Օգոստոս 1906:

[155] «Պրուսայի Ճարտարուեստական Ցուցահանդէսը», 28 Օգոստոս 1906:

[156] «Պրուսայի Ցուցահանդէսը», Օգոստոս 28-10 Սեպտեմբեր 1906, էջ 3:

[157] Միւպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 23 Օգոստոս 1906:

[158] دفتر، س٨٣

[159] Նոյն. նաեւ՝ Միպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական Ցուցահանդէսը», 23 Օգոստոս 1906:

[160] دفتر ، س٨٣

[161] «Պրուսայի Ճարտարուեատական Ցուցահանդէսը», 28 Օգոստոս 1906:

[162] Նոյն: دفتر ، س٨٣

[163] دفتر ، س ٨٤

[164] Նոյն:

[165] Նոյն. նաեւ՝ Միպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական», 23 Օգոստոս 1906:

[166] بروسه سركيسى, عدد ٧ , ٢١ اغستوس ٣٢٥ , متبعهٔ ولايت , **٨٤

[167] Միպահիաճեան, «Պրուսայի Ճարտարուեստական Ցուցահանդէսը», 23 Օգոստոս 1906, նաեւ՝ «Պրուսայի Ճարտարուեստական Ցուցահանդէսը», 25 Օգոստոս 1906:

[168] Zafer Toprak, "Jön Türk Devriminin Görselleşmesi – 10 Temmuz Bursa Sergisi - 1909", *Tombak*, Sayi 29, Aralik 1999, էջ 2:

[169] Զ. Գրիգոր, «Պրուսայի Արուեստահանդէսը», Պրուսա, 31 Օգոստոս», *Ազատամարտ Օրաթերթ*, 8/21 Սեպտեմբեր 1909, էջ 2:

[170] Korkmaz, Eken, էջ 14:

[171] Toprak, էջ 3:

[172] Korkmaz, Eken, էջ 13:

[173] Նոյն:

[174] Նոյն, Eken, էջ 15:

[175] Գրիգոր, էջ 2:

[176] Korkmaz, Eken, էջ 12. նաեւ՝ Toprak, էջ 13. նաեւ՝ Seher Boykoy, A-3/ Bursa Sergileri, s. 20, http://anemi.lib.uoc.gr/php/pdf, 01.11.2016:

[177] Գրիգոր, էջ 2:

[178] Toprak, էջ 13:

[179] Korkmaz, էջ 15. նաեւ՝ Toprak, էջ. 13:

[180] Գրիգոր, էջ 2:

[181] Korkmaz, Eken, էջ 15. նաեւ՝ Toprak, էջ 13.

[182] Korkmaz, Eken, էջ 14:

[183] Գրիգոր, էջ 2; նաեւ՝ بروسه سركيسى, عدد ٧ , ٢١ اغستوس ٣٢٥ , متبعهٔ ولايت , س س٨٠- ٧٩

[184] Գրիգոր, էջ 2

[185] Նոյն:

[186] Նոյն:

[187] بروسه سركيسى, عدد ٧ , س ٨١.

[188] Գրիգոր; նաեւ՝ بروسه سركيسى, عدد ٧ , س ٨٢

[189] Գրիգոր; նաեւ՝ بروسه سركيسى, عدد ٧, س ٨١

[190] Գրիգոր:

[191] بروسه سركيسى, عدد ٧ , س ٨٠.

[192] Գրիգոր:

[193] Նոյն:

[194] Նոյն:

[195] Նույն:

[196] بروسه سركيسى, عدد ٧ , س **٧٤.

[197] Գրիգոր:

[198] Նույն:

[199] بروسه سركيسى, عدد ٧ , س ٧٧.

[200] Korkmaz, Eken, էջ 17-18. նաեւ՝ Hüseyin Mevsim, BULGAR KAYNAKLARINDA 1909 BURSA SERGİSİ, http://btk.balgoc.org.tr/yazilar/hmevsim.html/, 14.04.2017

[201] Korkmaz, Eken, էջ 18-19: Դեռեւս ամսագրի բոլոր համարների թուային տարբերակները մեր ձեռքում չունենք, որն անկասկած լաւագոյնս կարող էր ներկայացնել մեզ ցուցահանդէսի բովանդակութիւնը:

[202] *Armenians in Turkey 100 Years Ago, Volume II*, Edited by Osman Köker, Translated by Ahmed Fethi, Istanbul, 2013, էջ 42:

[203] Mevsim:

EXHIBITIONS ORGANIZED IN BURSA PROVINCE AND THE PARTICIPATION OF ARMENIANS

(Summary)

ANI J. AVETISYAN
aniavet84@mail.ru

The author focuses on two industrial and agricultural exhibitions, which took place in the capital of Bursa Province. The first one was in 1906, during the reign of Sultan Abdul Hamid (1876-1909); the second was in 1909, during the reign of Sultan Mehmed (1909-1918). The last exhibition was held in 1923.

Based on published documents, the booklets of the exhibitions and newspaper coverage, the author notes that exhibitors and craftsmen came from Bursa, Istanbul, Ankara, Sparta, Konya, Thessaloniki, Edirne, Kayseri, Manisa, Kirshehir, and other regions of the Ottoman Empire, both close and relatively distant.

Armenian participants, master craftsmen and merchants, displayed silver and gold items, caskets, silver-framed mirrors, silver belts, silk and woolen carpets, clothes, embroidered pillowcases, ties embroidered with pearls, silk, handkerchiefs, tablecloths, antique jewelery, swords, ornate chests, musical instruments, old wine, cognac and vodka, preserves, olive oil, syrups, barley, wheat, olives, thermometers, saddles, agricultural and shoemaking tools, large bath towels, bathrobes, leatherwork, pearls, ceramics, wood work, furniture etc.

The author highlights the participation of Armenians (106 participant in the 1906 fair) in these exhibitions and, based on the list of participants and the material displayed, concludes that Armenians outnumbered Turkish and other ethnic participants in displaying both agricultural products, handcrafted items and self-invented materials.